ինչպէս վարում էին անցեալում, Հայաստանին կը պարտադրեն անընդունելի սահմանագիծ, մինչդեռ սահմանային խնդիրը իր էութեամբ այնպէս էր, որ կարող էր լուծուել միայն շահագրգռող կողմերի միջև առանձին-առանձին:

Հայաստանի Խորհրդի նոյեմբ. 8-ի նիստում քննուեց Ռամիշվիլիի դիմումնագիրը, և առաջին անգամը Հայաստանի Հանրապետութեան կեանքում Խորհրդի բոլոր կուսակցութիւնները, առանց բացառութեան, կանգնեցին միևնոյն տեսակէտի վրա՝ բուռն կերպով դատապարտելով Վրաստանի կառավարութեան մենատիրական ձգտումները: Եւ որ հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական կապեր պահել վրաց սոցիալ-դեմոկրատների հետ: Սոցիալ-դեմոկրատ պատգամաւոր Ա. Մալխասեանը բուռն կերպով բողոքեց խորհրդաժողովը հրաւիրելու տարօրինակ ձևի դէմ, որը այս դէպքում համազօր էր բռնանդակութեան. իր քայլով Վրաստանի կառավարութիւնը խախտում էր հաւասարութեան սկզբունքը, կամենում էր ուրիշների վրին փաթաթել իր կամքը: Նա ինքնագլուխ կերպով որոշել է խորհրդաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Նման դրութիւն կարելի չէ հանդուրժել:

Անհանդուրժելի դառաւ և «ըստ ձևի ու ըստ էութեան դէմ» արտայայտուեց նաև սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիան: Նոյն պատճառաբանութիւններից մեկնելով՝ բացասաբար վերաբերուեցին և դաշնակցական ու ժողովրդական ֆրակցիաները: Եւ դրեթէ միաձայնութեամբ Խորհուրդը որոշեց չմասնակցել նոյեմբ. 10-ի խորհրդաժողովին և յանձնարարել կառավարութեան, որ աշխատի «հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրօք համաձայնութեան գալով նրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ»: Միաժամանակ Խորհուրդը որոշեց, որ հայ-վրացական սահմանային վէճը առընչութիւն չունի այդ խորհրդաժողովի հետ և «պէտք է վճռուի միայն երկու հանրապետութիւնների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնութեամբ»:

Եւ Ռամիշվիլիի ծրագրած խորհրդաժողովը յետաձգուեց:

Քիչ չէին և ուրիշ առիթներ, որոնք բարդացնում էին հայ-վրացական փոխյարաբերութիւնները: Հայաստանը կտրուած էր ամբողջ աշխարհից, խեղդւում էր իր լեռներում և, իրաւամբ, սպասում էր, որ հարևան Վրաստանը մի քիչ մարդկային վերաբերում կունենայ իրեն հանդէպ: Ընդհակառակը, վրացիները, կարծես դիտմամբ, խնդիրներ էին ստեղծում, վիրաւորում էին հայերի արժանապատուութիւնը, դժուարացնում հաղորդակցութիւնը դրսի հետ, նոյնիսկ փակում էին իրենց սահմանները հայերի առջև: Պատրուակ բռնելով Թրանզիտային համաձայնութեան չգոյութիւնը Հայաստանի և Վրաստանի միջև, վրաց կառավարութիւնը արգելքներ էր հանում հայերի առջև: Սովի և հիւանդութիւնների ճիրաններում գալարուող Հայաստանի համար այս վերաբերումը համարւում էր անխիղճ, տմարդի, թշնամական: